



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Удешителъ пликъ

1902

491.99-8

12-82

1902. № 1023.

ՅՈՒՆ. ԱՐԲՐԱՋԵՆ

2877

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ



(Պատկերներով, գրովձեռն օրինակներով եւ գրատպ վարժարաններով)

ԳՐԱԸ 25.409ԷԿ

Одобрена Попечительскимъ Советомъ Кавказскаго Учебнаго Округа для употребленія въ начальныхъ училищахъ.

Երկրորդ փոփոխած եւ լրացած ապագուրիւն



ԱԼԷԿՍԱՆԴՐԱԳՕԼ
Տպարան Սանդեանի եւ Սեփանեանի

1902

491.99-8
Ա-82

1005-10
20 FEB 2018

арм-к
2877

491.99-8
Ա-82

ՅՈՒՆ. ԱՐԱՐԱՋՅԵՆ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ի

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

(Պատկերներով, գրութեան օրինակներով եւ գրաւոր վարձով թիւններով)

Одобрена Попечительским Советом Кавказского Учебного Округа для употребленія въ начальныхъ училищахъ.

ԳՐԵՐ 25 ԿՈՊԵԿ

Ներածի փոփոխած եւ լրացած ապագրութիւն



ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼ
Տպարան Սանդեանի եւ Սեփանեանի
1902

20 FEB 2013



Дозволено Цензурою. 10-го Января 1902 года, г. Тифлисть.



60589-67

Կ Ա Ձ Մ Ո Ղ Ի Յ

Մեր կազմած «Մայրենի Լեզուն» հրատարակում ենք երկրորդ տպագրութեամբ՝ այն փոփոխութիւններով, որոնք ցոյց են տրուած Կովկասի Ռատմնարանական Շրջանի Հոգաբարձական Խորհրդից: Բացի այդ՝ այս տպագրութեան մէջ աւելացրել ենք՝ ա. մատում—գրութեան օրինակներ, իսկ ք. մատում—մի քանի յօդուածներ եւ նիւթեր գրատր աշխատութիւնների համար:

Չնայելով, որ յիշեալ յանդիմանների շնորհիւ տպագրութեան ծախսերը կրկնապատկում են եւ գրքի ծաալը մեծանում է, այնուամենայնիւ մենք նրա գինը պակասեցնում ենք, որպէսզի այդ կողմից քոլրի համար էլ մեր «Մայրենի լեզուն» մատչելի լինի:

Յատկապէս խնդրում ենք ուսուցիչներին եւ ձեռնհաս անձանց գրել մեզ այս դասագրքի մէջ իրանց նկատած թերութիւնների մասին, որպէսզի հնարաւորութիւն ունենանք հետեւեալ տպագրութեան ժամանակ վերացնել դրանք: Նրանց, որոնք կրցանկանան դրանով նպաստել մեզ, նախապէս յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ


1. Իւրաքանչիւր դասի սկզբում մի պատկեր իւր անունով, որի օգնութեամբ մանուկները հեշտութեամբ կ'իմանան, թէ ինչպէս է կարդացում անձանօթ տառը:

2. Նոր տառով բառեր (վանկերի բաժանած)՝ կարդալու և գրելու համար:

3. Փոքրիկ նախադասութիւններ և հայկական զիւր-ըմբռնելի առածներ (վանկերով և առանց վանկերի)՝ կապակցական ընթերցանութեան համար:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն
Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

1.




БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

սար

ս, ա, ր, սար

ս ա. ս ա ր. ա - ս ա. ա - ր ա:

2.




մատ

մ, տ, մատ

Մաս. տաս. տար. արտ. տամ. ա-տամ. Ա-րամ:


3.



մաղ *դ, մաղ*

Աղ. մաղ. տաղ. ա-րաղ. տա-րաղ:—Ա-րամ, տաղ ա-սն:


4.



տաշտ *շ, տաշտ*

Տառ. շառ. շա-մամ:—Ար-շնմ, շա-մամ տնս:


5.



շիշ *ի, շիշ*

Իմ. մի. միս. տա-րի. մա-տիտ:—Մա-րի-ամ, ա-րի, մաղ տամ:

6.



սազ *զ, սազ*

Սա. սազ. գա-րի. Մազ-տազ:—Մար-գնր, ա-րի, գա-րի տամ: Սարգիս, շամամ տար:


7.



ե-րես *Է, Էր, Էս*

Ես, եղ, տեղ, ա-սեղ, ա-ղեղ: — Մարիամ, երգ երգիչ: Ես մի երգ գիտեմ:


8.



ոսո *ո, ոս, ոսո*

Որ, որս, որ-տեղ, շոր, գող, Հո-ղեր: — Մար-գարիտ, օր-տեղ ես: Գրիգոր, շոր տար: Մարգիս, արի, որսի միս տամ:


9.



կար *Կ, կար*

Կեր, կա-րաս, եր-կար, ոս-կի: — Աստ-ղիկ, շոր կա-րի: Մակար, մատաղ արա: Կատար, մի երգ երգես:

10.



նա-մակ *ն, նա, նակ*

Նա, նան, Ան-նա, գի-նի, մա-տա-նի: — Ես մե-նակ եմ: Նանի, կարագ տան: Հողիկ, տատին նամակ տար: Մանիկ, աղ մաղիր:

БИБЛИОТЕКА
ИИСТИТУТА
ПОСТОЯТЕЛЬНО
Академии Наук
СССР

11.




AMERICAN PATENT TYPE CASE

տա-ւր *թ, տաւր*

Ըն-կեր. ըն-տիր. ըն-տա-նի. մա-ղը. կա-րա-սը:—
Ար-շա-կը գլխի կը-տա-նի: Ատողիկ, իմ ընկեր Սի-
սա-կին որ կը տեսնես, արի, ասան:


12.



ցանց *ց, ցանց*

Գրի-գո-րը ցո-րեն ցա-նեց: Ա-շա-կեր-տը նա-մակ
գը-րեց: Իմ ընկերը սարը գնաց: Մացակը կացինը
սեղանի տակ գցեց:


13.



էշ *է, էշ*

Կա-րի-նէն մեր տա-նըն է: Գէ-որ-գը իմ ըն-կե-րըն
է: Իմ գեղեցիկ մատանին մատիւ է: Սղոցը սեղանի
տակին է: Մեր սագը շատ գեղեցիկ է:


14.



նաւ *ւ, նաւ*

Նա-ւա-կը գե-տի ե-րե-սին է: Կա-ւից ա-ման-ներ շի-
նե-ցին: Եսաւը որսի գնաց: Նաւատէրը նոր նաւ գնեց:

եւ — և



տե-րեւ *տ, տեւ*

Սև. ա-րև. կե-ղև:—Հողիկը և Ատողիկը: Արամը և
Գեղամը ընկերներ են: Գեանին շատ տերևներ կան:
Եղևին գեղեցիկ է:

15.




կա-տու *ու, կատու*

Հու-նը շա-նից, եր-կու-սը մի տա-նից: Հու-նըն ու

կա-տուն ի-րար միտ են ու-տում: Արշակը մեր ուրազը
կորցրեց: Ուտումնարանում մանուկները գրում են:


16.



դա-նակ *դ, դանակ*

Ուղ-տըն ըն-տա-նի կեն-դա-նի է: Մեր դրա-ցին դա-
նակ գը-նեց: Գուրը դարակումն է: Գող, սիրտը գող:
Մեր դրացու որդին իր դասը գիտէ:

17.




բաղ *բ, բաղ*

Բա-զա-րանտ, բամ-բակ գը-նիր, տա-տին տար:

Բամբակը դաշտումըն է բուսնում: Մանուկ, միշտ բարի եղի: Բարի մարդկանց ամենը սիրում են: Բազր գետում գորտ է որսում:


18.



հալ *h, haw*

Աղ ու հաց, սիրտը բաց: Դարբի-նը բահ է շինում: Դանակը սակոթին մի հասցնիր: Համբերող եղի՛ր: Հեղինէն համեստ է:


19.



լավ *l, law*

Հուսի-նը լուսաւորում է երկի-րը: Մազե-րը լուրում են զետի երե-սին: Հաւ տղան ընկերից կերևի: Մի ասիր, մի լսիր: Հորը արտերումն է շինում իր բունը:


20.



զանգ *z, zang*

Ոգնին կենդանի է: Լեզուն դանակից սուր է: Չարուհու մազերը շատ երկար են: Բզէզը բրզզում է: Բազէն հաւ տարաւ: Գազանները սարերումն են բնակում:


21.



օղակ *o, oghak*

Սև օրին էլ սև շոր է հարկաւոր: Մօտիկ հարեւանը բարեկամից լաւ է: Մահը մէկ օր, լացը մէկ օր: Իմ հօր կօշիկները օրօրոցի տակն են:


22.



ժամ *ժ, ժամ.*

ժա-մա-սէր մար-դիկ ժամ են զը-նում: Բը-ժիշ-կը հի-
ւան-դին ղեղ է տա-լիս: ժամանակը ոսկի է: Բաժակը
սեղանին է: Գժի համար ամեն օր նոր տարի է:

23.



թաս *թ, թաս.*

Բա-ղի թա-թը կար-միր է: Թե-լը որ բա-րա-կեց,
կը-կըտ-րի: Թող սև լինի, շատ լինի: Մեր թասը դա-
տարկ է: Չողակաթը կաթ բերեց մեզ: Թանը թթու է:
Ուրբաթ օրը տօն է:

24.



բեռ *բ, բեռ.*


Ագ-ուար կըռ-կը-ուտ է: Ռու-բէ-նը մա-ուա-նից
զա-ռի միս է բե-րում: Գառը գարնանը կըլինի: Ես
շատ ուսերէն բառեր գիտեմ: Գնա մեռիք, արի սիրեմ:
Գանակը ոսկոսին է հասել:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ПОСКОБЕДЕНИЯ
Академии Наук
СССР

79-68509

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-ԱՐՄ ՍՍՐ
Հ. ԱՄԱՆԻԱՆԻ ԱՆՎԱՆԸ


25.



ծառ *Շ, Շառ*

Պար-կու-տը ծե-ծած տե-ղը կը-ծե-ծէ: Ծե-րա-նաս, ծե-րի հա-լը ի-մա-նաս: Ծիծեռնակը գարնանը կերևի: Լեզուն ածելուց սուր է: Ամեն ծաղիկ իր հոտն ունի: Հացը դրած, բանն անիծած:

26.



ճանճ *Ճ, ճանճ*

Ճա-հի-ճում շատ ճի-ճու-ներ կան: Ճա-գա-րը սի-րուն կեն-դա-նի է: Ճրագը գիշերն է հարկաւոր: Սաթենիկը ճաշ է անում: Եղբորս ճակատը շատ կնճիռներ ունի:




27.



պար-տէզ *պ, պարտէզ*

Պա-պը պար-կած է պար-տի-զում: Պաս ու-տեմ պաս, էն էլ թա-նէ սը-պմս: Նապաստակն ու ճագարը մի ցեղից են: Մեր եզը երկար պողեր ունի: Հաց ու պանիր, կեր ու բանիր:

28.



գրիչ *Գ, գրիչ*

Չան հա-չա-լուն մի հա-ւա-տալ: Չու-նը շան մը-սից չի ու-տիլ: Չար մանուկները չարչարում են ճանճերին:

Միսն առանց ոսկոր չի լինիլ: Ինչ կ'ատես, էն կըլսես:
Ուրագն իր կոթը չի տաշիլ:

29.



Չու-թակ *չ, չու թակ*

Ջր-րի բե-րա-ծը Չու-րը կը-տա-նի: Ջր-հո-րից մար-
դիկ Չուր են հա-նում: Կուժը ջրի ճամպին կրկոտրի:
Արջը գարհուրելի գազան է: Ջրադացում մարդիկ հացա-
հատիկ են աղում: Անջուր ջրադաց, անկրակ բազարջ:


30.



վարդ *վ, վարդ*

Վագ-ըր վի-րա-ւո-րեց որ-սոր-դին: Վարդը շատ հո-
տաւէտ է: Ուզտին գղալով չեն ջրիլ: Չունը կաղալով
չի սատկիլ: Մէկ ծաղկով գարուն չի գալ:


31.



ճի *ջ, ճի*

Ջրկ-նոր-սը ցան-ցով ձուկ է որ-սում: Կար-միր ձուն
Ջստ-կին կը-սա-գի: Ինչ որ ցանես, էն կըհնձես: Էջը
գատի, ձին ուտէ: Անուշ լեզուն օձը ծակից կըհանէ:


32.



խոզ *խ, խոզ*

Խո-զը շա-տա-կեր կեն-դա-նի է: Մե-զըր ծա-խո-զը մա-տը կը-լի-գէ: Զուկը գլխից կըհոտի: Խեկն խրատը, սեկն սապոնը ի՞նչ անէ: Ինչ կըբրդես, էն կըխրթես:


33.



փիղ *փ, փիղ*

Փղա-պա-նը փո-ղո-ցով փիղ է ման ա-ծում: Մե-զուները փեթակում մեզը են շինում: Վարդն առանց փշի չի լինի: Վարդը վերցրու, փշին կրակ տուր:


34.



քիթ *ք, քիթ*

Տա-շած քա-րը գետ-նին չի մը-նալ: Մենք աչ-քով տես-նում ենք: Քամու բերածը քամին կրտանի: Օձն առաջ իրան տաքացնողին կրկծի: Զիտակ խօսքը հա-նաքի միջով կ'ասեն: Քիչ բարձիր, շուտ դարձիր: Երկա-թը տաք-տաք կըծեծեն:


35.



ֆուր-գոն *ֆ, ֆուրգոն*

Ֆուր-գո-նով ապ-րանք են կը-րում: Թուր-քե-րը ֆէս են ծած-կում: Նունուֆարը գեղեցիկ ծաղիկ է: Ֆառաշով ազր են հաւարում: Օձը ֆըշշում է: Փղին ֆիլ էլ են ասում: Գնչուհին ֆալ է բաց անում:

36.



յո-վազ *յ, յովազ*

... Ի. ...

Յու-նի-սին մենք յար-մար բնա-կա-րան կը-գրտ-նենք: Յուլիսին եղանակն անտանելի է դառնում: Յուպոսն ինքն է հոտած, հէնց զիտէ՝ բունն է հոտած:

II.



այծ

Հայրս մի գայլի ձագ բունեց: Աստծու պահած գառը գայլը չի ուտիլ: Որտեղ հաց, այնտեղ կաց: Մայրս ու եղբայրս այգի գնացին:


III.

Նա հայ է: Վա՛յ ձեզ: Եղբայրս այսօր թէյ չ'ունի: ձայր ճահճային թուշուն է: Օ՛յ, ինչ շոգ եղանակ է: Հէ՛յ, բարեկամ, այդ ո՞ւր ես գնում:

IV.

Մինչև տղան չլայ, մայրը նրան ծիծ չի տայ: Ջուրը ընկնողը անձրևից չի վախենայ: Ջուրը շտեսած մի բորիկանայ: Ով որ խաղայ, նա կըկաղայ: Գայլն ամպ օրը կ'ուրախանայ: Այսօր մի քահանայ տեսայ: Բանդ արն, յետոյ խաղն:

V.



ժա-մա-ցոյց

Ժամագործը ժամացոյց է շինում: Մի ծաղկից օձը թոյն է շինում, ճանճը — մեղր: Մակոյկով լողում են գետի երեսին: Ծառը բոյս է: Ծոյլ աշակերտը պատժի արժանի է: Քոյրս Արշալոյսին նամակ է գրում:

37.

I.



առիւծ

Կիւրակի օրը իւղալի կերակուր կերանք: Հիւրն եկաւ, հիւրը գնաց, տեղը դատարկ չմնաց: Աղբիւրի մօտ մեծ բազմութիւն կայ: Աշակերտը իւր դասն է սովորում:

II.



արծիւ


Փոքրերը պէտք է պատիւ տան մեծերին: Փողերիդ հաշիւը գիտցիր: Մեր գրացու տունը սուգ ու շիւան կայ: Հիւանդը որ գնալու լինի, մատաղը չի օգնի: Ծերանաս, ծերի պատիւը կ'իմանաս:

38.

եա. եօ.

Համբերութիւնը կեանք է: Եօթը ծովից, մէկ կովից: Կարծեօք սենեակում մարդ կայ: Արգեօք երբ պէտք է երկինքը պարզէ և լուսնեակը դուրս գայ: Յիսուս Քրիստոս եօթանասուն երկու աշակերտ ունէր:

38.



աղուէս

Աղուէսը խորամանկ կենդանի է: Զուի գողը ձիու գող կըղառնայ: Զմեռուայ վարդը կրակն է: Ամառուայ փուշը, ձմեռուայ նուշն է: Կատուին խաղ է, մկանը մահ է: Գետինը ձիւնով ծածկուեց: Այսօրուայ գործը վաղուան մի թողնիր:

40.

Զգալ—ըզգալ: Հտապել—ըչտապել: Սկսել—ըսկսել:
Ստանալ—ըստանալ: Սպիտակ—ըսպիտակ:

Սկզբում Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը: Սպունգը ծովից են հանում: Սպիտակ շունը բամբակ ծախողին վնաս է: Հտապողին չի յաջողուիլ: Սկիւռը թռչկոտում է ծառից ծառ: Յուրտն արդէն զգալի է: Երեխաներն զբօսում են պարտիզում: Զգոյշ կացէք, փորձութեան մէջ չընկնէք:



ՀԱՅԵՐԷՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, լւ, ծ, կ, հ, ձ,
ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ր, ց, ւ, փ,
ք, և, օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, լւ, ծ, կ,
հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ,
տ, ր, ց, ւ, փ, ք, և, օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, լւ, ծ, կ,
հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ,
տ, ր, ց, ւ, փ, ք, և, օ, ֆ:

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, ԼՎ, Ծ, Կ, Հ,
Ղ, Ճ, Դ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Զ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Բ,
Ֆ, Ի, Փ, Ք, Օ, Ֆ:



ՀԱՅԵՐԷՆ ԳՐԶԱԳԻՐ ԱՅՐՈՒՐՆԵՐ:

ա, բ, գ, դ, ՚, Վ, ֆ, ջ, ռ, ժ, ի, յ,
 խ, ճ, կ, հ, չ, ղ, ճ, ժ, յ, ն, զ,
 ո, ջ, ա, գ, ո, ա, վ, փ, ք, ց, լ,
 փ, ք, և, օ, ֆ:
 Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ,
 Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Զ, Դ, Ե,
 Վ, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը,
 Ա, Ա, Վ, Ա, Բ, Գ, Դ,
 Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ,
 Մազու իր ին եօրն ու ձորը, որ քիչ բա-
 րի լինի և քիչ յնակի այ լինի քի-
 ցորի վրայ:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
 ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
 ԱՅՐՈՒՐՆԵՆԻՑ ՅԵՏՈՅ.

1. Ա Ռ Ա Ի Օ Տ

Հուսացաւ, լուսացաւ, լոյսն է բարին, ծիտն է ծա-
 ոին հան է թառին: Աշխատաւոր, վեր կաց բանի.
 ծոյլ տղայի քունը կրտանի:


2. Ա Ք Ա Ղ Ա Ղ



Դու ինձ ասան, աքաղաղ, ոսկէ կա-
 տարիդ մատաղ, կարմիր մօրուքիդ մա-
 տաղ. ինչո՞ւ ես շուտ արթնանում, բար-
 ձրը-բարձր երգ ասում, քաղցր քունս
 խանգարում:

3. ԳԱԶ ԹՈՒՆ

- Ձնիկ, ինչո՞ւ ես հաչում:
- Գայլերին եմ վախեցնում:
- Ձնիկ, ինչո՞ւ պոչդ քեզ քաշեցիր:
- Գայլերից եմ վախենում:




4. ԲԱՐԻ ԹՈՒՆ



Չունը պահպանում էր իւր ախրոջ տունը: Նա տեսաւ մի աղքատ մարդու և սկսեց նրա վրայ հաշել:

—Սիրելիս,—խնդրեց աղքատը,—խղճան ինձ. ահա երեք օր է, որ ոչինչ չեմ կերել:
—Ես էլ նրան համար եմ հաչում,—պատասխանեց շունը,—որ մարդիկ լսեն ձայնս և քեզ կերակրեն:



5. ԺԻՏՐ ԵՒ ԲԱԶԻՆ

Ծիտը ծառին ծըլվելում է
Ծիւ, ծիւ, ծիւ:
Բազին գլխին պտըտում է,
Վճւյ, վճւյ, վճւյ:
Ծիտը լուց, ծիտը վախեց,
Վճյ, վճյ, վճյ:

Բազէ, թը՛ռռ, բազէ, թը՛ռռ,
Հնյ, հնյ, հնյ:
Բազէն թռաւ,
Բազէն փախաւ,
Ի՛նչ լաւ եղաւ,
Հէյ, հէյ, հէյ:

Ծիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,
Պրտալրտուրիկ, չըլալրտուրիկ,
Դու լաւ պրծար շար բազէի
Սուր ճանկերից, հն, հն, հն:



6. ԿՂՏ ՈՒՆ ՈՒ ԹՈՒՆԸ

Որսկան շունը մի նապատտակ էր բռնել: Կատուն այդ որ տեսաւ, շանը նախատեց ու ասաց. „Ի՛նչ անգութն ես“: Հէնց այդ բառերին մի փոքրիկ մուկը ծակից դուրս եկաւ և վազելով անցաւ նրանց առաջից: Կատուն վրայ հասաւ, բռնեց ու կերաւ: Չունն ասաց.

— Այդ ի՞նչ ես անում: Դու ինձ նախատում ես, որ ես մի նապաստակ եմ բռնել իմ տիրոջ համար, իսկ ինքդ մոռնի ես բռնում ու անուշ անում:

— Է՛հ, ոչինչ, իմ կերածը մի չնչին մուկն է, — պատասխանեց կատուն:

Քո աչքի գերանը թողած, ուրիշի աչքի շիտն ես պտրում:

7. Կ Ա Տ Ո Ի

Կատուն եկաւ, փխսի՛կ-փխսի՛կ,
Հազար նազով՝ ինչպէս հարսիկ.

Դունչը սրբեց թաթիկներով,

Մազը սանրեց շանչիկներով:

— Կատն, կատն, է՛ր ես տրտում.

Թէ՛ մկներն են այսօր արթուն:


8. Գ Ե Ղ

Փոքրիկ Աննայի մայրը հիւանդացաւ և բժիշկը նրան մի դառը դեղ տուեց խմելու: Աղջիկը տեսաւ, որ մայրը դժուարութեամբ է խմում դեղը, ասաց նրան:

— Մայրիկ, տո՛ւր, ես խմեմ քո փոխարէն:

9. Խ Ե Լ Ա Յ Ի Ա Յ Ռ Ա Ի Ը

Ազուար ծարաւ էր: Նա շատ դէտուղէն ընկաւ և



վերջապէս դաշտում տեսաւ մի կճուճ, որի մէջ ջուր կար. բայց ջուրն այնքան ցած էր, որ ազուար չէր հասնում: Նա սկսեց մանր քարեր գցել կճուճի մէջ. այդպիսով ջուրն այնքան բարձրացաւ, որ նա խմեց, ծարաւը կտորեց և թուաւ, իւր գործին գնաց:

10. Մ Ա Ն Ո Ի Կ Ն Ե Ը Ն Ո Ի Գ Ո Ր Տ Ե Ը Ը

Մանուկները խաղում էին գետի ափին և յանկարծ տեսան, որ ջրում շատ գորտ կայ: Նրանք քարեր հաւաքեցին և սկսեցին մէկ-մէկ քարկոծել գորտերին: Երեխաները սաստիկ ուրախանում էին:

Մի գորտ գլուխը դուրս հանեց ջրից ու ասաց.


— Մանուկներ, բաւական է քար գցէք. դա ձեզ համար խաղ է, իսկ մեզ համար — մահ:

Ա ո ա ծ. — Կատուն խաղ է, մկանը մահ է:



11. Ա Ր Ե Ի


Արև, արև, եկ, եկ,
Նախշուն քարին վեր եկ,
Մեր ոչխարին մտիկ արահ,
Որ գայլը գայ, իմաց արահ:



12. Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Փոքրիկ մանուկը միշտ տեսնում էր, որ հայրը գիրք կարդալիս ակնոց էր դնում աչքերին: Մի օր էլ նա խնդրեց հօրը.

—Հայրիկ, ինձ համար էլ ակնոց գնիր. ես էլ ուզում եմ քեզ պէս գրքեր կարդալ:



—Լաւ,—պատասխանեց հայրը.— ես քեզ համար մանկական ակնոց կըզնեմ:—Եւ որդու համար գնեց մի այբբենարան:

Ա ո ա ծ. — Ով կարդայ, նա մարդ ա:

13. Կ Ա Ր Գ Ա Լ — Գ Ր Ե Լ

Երբ որ լեզուս բացուեցաւ,
Ազատ խօսիլ սովրեցայ,
Բարի մօրս ձեռքի տակ,
Գրել—կարդալն սկսայ:
Չատ ժամանակ չանցկացած,
Այլևս գիր կարդալը

Այնպէս դժուար չէր թուում,
Ինչպէս կ'ասեն ծոյլերը:

Այնուհետև ինձ համար
Հոլ, վեզի, գնդակի շափ
Սիրելի են թուղթ, գրիչ,
Գիրք, քանոն, մատիտ, տետրակ:



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

14. Գ Ա Ս Ա Տ Ո Ի Ն

Դասատան մէջ նստում են աշակերտները: Աշակերտների առաջ նստած կամ կանգնած է վարժապետը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սովորում են: Դասատան մէջ աշակերտները կարդում են, գրում են, հաշում են, նկարում են: Աշակերտների դէմ դրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի մօտ կան կաւիճ և սպունգ: Գրասեղանների վրայ դրած են գասական առարկաներ — գիրք, տետրակ, քարետախտակ, քարեգրիչ:

Դասական առարկաներ. — Գիրք, տետրակ, քարետախտակ, գրչա-կոթ, գրիչ, մատիտ, քարեգրիչ, քանոն, թանաքաման, սպունգ: Խաղալիքներ: — Գնդակ, տիկնիկ, բզզան, վեգ...

ԳՐԵՒՈՐ ՎԵՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Արտագրեցէք այս բառերը և ձայնաւոր տառերի տակ գիծ քաշեցէք: Յետոյ առանձին գրեցէք ձայնաւոր տառերը:

Աղ: Մաղ: Եգ: Էշ: Գերի: Գինի: Ընկեր: Մուկը: Որդ: Ոգնի: Օրհորդ: Ուղտ: Շուն: Կատու:

2. Գրեցէք հայերէն այբուբենի բոլոր բաղաձայն տառերը: Բ, Գ, Դ...

3. Լրացրէք այս վարժութիւնը:

Գիրքը դասական առարկայ է: Գնդակը խաղալիք է: Մատիտը... Գրիչը... Վէճը... Տետրակը... Տիկնիկը... Բզզանը... Քարտասխտակը...

15. Մ Ա Գ Ի Կ

Սագիկ — մագիկ,
Իմ սիրունիկ,
Ես քեզ կրտամ
Քաղցր կուտիկ,

Որ դու ուտես,
Ջուտ մեծանաս,
Ուրախ ապրես,
Ջուարճանաս:


Երբ մեծանաս,
Մեծ սագ դառնաս,
Ես կըխնայրեմ
Իմ մայրիկիս,

Որ նա ժողով
Քո փետուրներ
Եւ ինձ համար
Չինէ բարձեր:

Կե՛ր, իմ սագիկ,
Կե՛ր, սիրունիկ,
Որ մեծանաս,
Մեծ սագ դառնաս:

16. ՄԱԳՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Լողում էր սագը լճի երեսին, լողում էր և այսպէս խօսում ինքն իրան.



— Աշմարիտ, ի՜նչ զարմանալի թռչուն եմ ես: Գետնի վրայ ման եմ գալիս, ջրումը լողանում, օդումը թռչում: Ինձ նման ուրիշ թռչուն չկայ աշխարհիս երեսին:

Արագիլը լսեց սագի խօսքերը և ասաց նրան:

— Չատ յիմար թռչուն ես դու, սագիկ: Որ այդքան պարծենում ես, ապա՛մ, ասան, տեսնեմ, կարո՞ղ ես ձկան պէս լող տալ, եղջերուի պէս վազել կամ արծուի պէս թռչել: Աւելի լաւ է մի բան իմանալ և հիմնաւոր, քան թէ շատ բան և բոլորն էլ թերի:



17. Բ Ա Գ Ի Կ

— Բագիկ, բագիկ,
Կարմիր թաթիկ,

Ո՛ւր ես գնում կամաց-կամաց,
Չագուկներդ չորս կողմդ առած:
— Ես գնում եմ ջուր գտնելու,
Չագուկներս լուանալու.
Չագուկերս մարուր-մարուր,
Տղոց երեսն ազտ է ու մուր:

18. Մ Տ Ա Խ Օ Ս Հ Ո Վ Ի Ի Ը

Մի փոքրիկ հովիւ սովորութիւն էր արել խաբել իւր ընկերներին: Չատ անգամ նա երկիւղալի ձայնով կանչում էր.

— Գայլը եկա՛ւ, գայլը եկա՛ւ:

Հովիւները գալիս, տեսնում էին, որ գայլ չկայ: Իսկ ստախօս մանուկը ծիծաղում էր նրանց վրայ:

Մի օր էլ այս հովուի հօտի վրայ մի գայլ յարձակուեցաւ: Նա սրտապատառ սկսեց կանչել.

— Գայլը եկա՛ւ, գայլը եկա՛ւ:

Ընկերները կարծեցին, թէ էլի խաբում է, տեղերիցը չչարժուեցան: Գայլը նրա հօտի մէջ ընկաւ և պատասուտեց ոչխարներին:

Առած.— Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց:

19. Հ Ո Վ Ո Ի Ի Ա Ն Կ Ո Ղ Ի Ն Ը

Սարի լանջը մահճակալ,
Չեչոտ քարը գլխակալ,
Մի հին կարպետ ուտերին, —
Այս է հովուի անկողին:
Երբ անձրև է կաթկաթում
Եւ կարպետը թրխկթրխում,
Հովիւն անուշ քնի մէջ
Քաղցր երազ է տեսնում:
Եւ խնդում,
Ծիծաղում...

Ուխտայ, ուխտայ, սիրուն հովիւ, քունդ անուշ:

20. Դ Շ Մ Ա Ր Տ Ա Խ Օ Ս Մ Ա Ն Ո Ի Կ Ը

Մանուկին մի փոքրիկ ուրազ ընծայեցին: Նա այնքան ուրախ էր, որ ձեռքն ընկածը կոտրատում, փչացնում էր: Մանուկը մինչև անգամ կտրեց մի ծառ, որը նրա հայրը տնկել էր այգում: Երբ որ հայրը տեսաւ փչացրած ծառը, սաստիկ տխրեց և հարցրեց որդուն.

— Ո՞վ է կտրել այս ծառը. ես պէտք է խիստ պատժեմ յանցաւորին:

— Ի՞նձ պատժիր. ես եմ արել այդ, — պատասխանեց մանուկը:

— Այս ծառը շատ սիրելի էր ինձ, — ասաց հայրը, — բայց քո ճշմարտախօսութիւնն ամեն բանից թանկ արժէ: — Եւ նա գրկեց ու համբուրեց որդուն:

21. Կ Ո Յ Ր Ը

Մի անգամ, գիշերը, մի կոյր մարդ մէկ ձեռքում կճուճով կաթ, իսկ միւսում մի վառած լապտեր բռնած, կամաց-կամաց առաջ էր գնում: Ճանապարհին նրան պատահեց մի երիտասարդ և ասաց.


— Ա՛յ յիմար մարդ, ինչի՞դ է հարկաւոր այդ լապտերը. չէ՞ որ դու ոչինչ չես տեսնում:

— Այս լապտերը ես վերցրել եմ քեզ նման խելացի մարդկանց համար, որ նրանք չղիպչեն ինձ և կաթս չթափեն, — պատասխանեց կոյրը:

Առած.— Կոյրն ի՞նչ կուզէ — ջուխտ աչքով լոյս:

22. Կ Ա Ր Ա Մ Ի Ն Ե Ր

Ամեն մի տան մէջ կարասիներ կան—սեղաններ, աթու-
 ներ, պահարաններ, մահ-
 ճակալներ: Կարասիները
 շինուած են փայտից և ներ-
 կուած են, որ չփշանան և
 գեղեցիկ լինին: Աթու-
 ների նստեցատեղերը շատ
 անգամ փափուկ կտորով են ծածկուած լինում: Կար-
 ասիները շինուած են ատախճազործները:



Կարասիներ:— Սեղան, աթու, պահարան, բազմոց, բազկա-
 թու, մահճակալ, նստարան, գզրոց, դարակ:

Գ Ր Ե Ի Ո Ր Վ Ե Ր Ժ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

4. Արտադրեցէք այս միավանկ բառերը:
 Օր: Եզ: Խաղ: Մաղ: Արջ: Հայր: Չայն: Հող: Բանդ: Նալ:
 Էշ: Ծիշ: Բար: Մուրճ: Դուր:

5. Գրեցէք ձեզանից միքանի միավանկ բառեր:

6. Վանկեցէք այս բառերը:
 Ա-նի: Աղի: Եթէ: Եղան: Արա: Ուղիղ: Իրան: Օղակ: Կաշի:
 Կողակ: Մեղու: Շաքար: Կօշիկ:

7. Լրացրէք այս վարժութիւնը:
 Գիրքը դասական առարկայ է, իսկ սեղանը... Բզզանը խաղալիք
 է, իսկ բազմոցը... Նստարանը կարասի է, իսկ թանաքամանը...
 Բանոնը դասական առարկայ է, իսկ պահարանը... Մահճակալը
 կարասի է, իսկ սպունգը...

23. Ե Ր Կ Ո Ի Ա Յ Ժ

Առուակի վրայով մի նեղ գերան էր գցած անց-
 ուղարձ անելու համար: Մի
 անգամ երկու այծ պատահեցան
 այդ գերանի վրայ: Երկուսը մի
 անգամից չէին կարող անցնել.
 պէտք է մէկը յետ դառնար և
 միւսին ճանապարհ տար: Բայց
 ոչ մէկը չէր ուզում այդ անել: Նրանք սկսեցին վիճել:
 — Դու յետ քաշուիր, — ասաց մէկը. — առաջ ես եմ
 բարձրացել գերանի վրայ:



— 2է, — վրայ բերեց միւսը. — թող, որ առաջ ես
 անցնեմ. ես քեզանից մեծ եմ:

Եւ այծերը, ճակատ-ճակատի տալով, սկսեցին
 կռուել: Հակառակի պէս գերանը թաց էր: Կռուեցին,
 կռուեցին և երկուսն էլ թըրընդալով ջուրը թափուեցան:

24. Պ Ա Ռ Ա Ի Ն Ո Ի Ա Յ Ժ Ը

Կար-չկար երբեմն	Իւր բերնի պատառը
Մի ազրատ պառիկ.	Նրա հետ կիսեց:
Ունէր մեր պառուր	Սիրով-յօժար
Կաթնատու այծիկ:	Նրա հետ կիսեց:
2ալիկ-մալիկ	2իւնը հալուեցաւ,
Կաթնատու այծիկ:	Բըտաւ կանաչ խոտ,
Պառուր ձմեռը	Պառուան այծիկը
Այծիկը պահեց,	Դուրս տարաւ արօտ:

Ուրախ-գուարթ
 Դուրս տարաւ արօտ:
 Թանձր մառախուղը
 Գետինը սրտեց,
 Պառաւի առջևից
 Այծը կորցրեց:
 Ափսոս, ափսոս,
 Այծը կորցրեց:
 Պառաւը լաց եղաւ,
 Իսկ գայլը օռնաց,

Մոլորուած այծիկը
 Բարձր մըկըկաց:
 Մըկը՛կ, մըկը՛կ,
 Այծը մըկըկաց:
 Գայլը մօտ եկաւ,
 Այծին շալակեց,
 Պառաւը յետևից
 Բարձրաձայն գոչեց՝
 Հարա՛յ—հա՛յ—հարա՛յ,
 Բարձրաձայն գոչեց:

Խեղճը մնաց կանգնած
 Մի փունջ խոտ ձեռին,
 Անմխիթար ձայնով
 Կանչելով այծին՝
 Ե՛կ-ե՛կ, ե՛կ-ե՛կ,
 Կանչելով այծին:

25. *ԲԱՐԻ ԳԻՒՂԱՅԻՆ*

Գիւղում մի աղքատ ընտանիք էր ապրում—հայր, մայր և երկու տղայ: Դրանց ազգականը մեռաւ և մի որբ աղջիկ թողեց: Նրանք այդ աղջկան բերին, իրանց տանը պահեցին:

Կինն ասում էր մարդուն:

—Ա՛յ մարդ, Աշխէնին որ մեզ մօտ վերցրինք, մեր վերջին կոպէկն էլ նրա վրայ կըզնայ. աղի փոզ էլ չի մնալ, որ աղ առնենք, կերակրին խառնենք:

— Է՛հ, ոչինչ,— պատասխանեց մարդը,— մենք էլ կերակուրն առանց աղի կուտենք:


Ա. ռ. ա. ծ.— Աղ ու հաց, սիրտը բաց:

26. *Ո Ր Բ Ի Կ*

Փայլուն արեւ արգէն մայր մտաւ,
 Լուսինն էլ վազուց գնաց, թաք կացաւ.
 Գիշերուայ մութը աշխարհս պատեց
 Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:

Ամեն մարդ քաշուեց իւր տունը մտաւ,
 Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ:
 Միայն մի խեղճ որբ, որ շունէր հայր, մայր,
 Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
 Ոտքերը բոբիկ, տկոթ ու քաղցած,
 Մի տան պատի տակ մնաց կուճ եկած:

Բարի տանտէրը վերևից նայեց,
 Մեր թշուած որբին ներս հրաւիրեց.
 Եւ այնուհետև տարաբաղդ տղան
 Ունէր իւր համար տէր ու տիրական:



27. ՈՒՏԵՆԻՔ ԵՒ ԽՄԵՆԻՔ

Առանց ուտելիքի մարդը կըմեռնի քաղցից: Առանց խմելիքի նա կըմեռնի ծարաւից: Մարդու ամենահարկաւոր կերակուրը — հացն է, իսկ ամենահարկաւոր խմելիքը — մաքուր ջուրը:

Առաջնութիւնը. — Հաց ու պանիր, կեր ու քանիք: Մի բաժակ ջուր ով ուզի, տուր:

Ուտելիք: — Հաց, սպաս, փլաւ, տապակած...

Խմելիք: — Ջուր, կաթն, թէյ, սուրճ, գինի, գարեջուր, օղի...

28. Գ Ո Յ Ն Ե Ր

Զիւնն սպիտակ է: Ածուխը սև է: Մոխիրը գորշ է: Ոսկին դեղին է: Խոտը կանաչ է: Երկինքը կապոյտ է: Արիւնը կարմիր է:

Պաթը, մածուկը, թանը սպիտակ են: Թանաքը սև է: Ամպերը գորշ են: Պղինձը դեղին է: Ծառերի տերևները կանաչ են: Մանուշակը կապոյտ է: Վարդը կարմիր է:

29. Մ Ե Ր Մ Ե Ն Ե Ա Կ Ը

Մեր սենեակն ունի յատակ, առաստաղ և չորս պատ: Պատերն ու առաստաղը սպիտակ են. յատակը ներկած է կարմիր գոյնով: Պատերի մէջ շինած են դռներ և լուսամուտներ: Սենեակում կան վառարան, սեղան, աթոռներ, պահարան և դարակներ: Պահարա-

նի մէջ մենք պահում ենք մեր ամանները: Դարակներում դնում ենք մեր սպիտակեղէնը, իսկ մահճակալի մօտ պատից կախոտած են մեր հագուստները:

Ս. մ. ա. ն. ե. բ.: — Բաժակ, ափսէ, ջրաման, ըմպանակ, շիշ, կուժ, կաթսայ, ինքնաեռ, թէյաման:

Հագուստներ և սպիտակեղէն: — Վերարկու, բաճկոն, շապիկ, մուշտակ, գուլպայ, թաշկինակ, անդրավարտիք, երեսուրբիչ, սաւան:

ԳՐԵԻՈՐ ՎԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

8. Արտագրեցէք այս երկամական բառերը:

Կա-տու: Բաղաք: Երկինք: Երկիր: Ոգնի: Թանաք: Գիտուն: Գունատ: Եղէգ: Երկար:

9. Գրեցէք ձեզանից միքանի երկամական բառեր:

10. Արտագրեցէք այս բազմամական բառերը:

Գիւղացի: Բաղաքացի: Աշակերտ: Ժամանակ: Զուակասէր: Զինուորական: Մանկական: Ժամանակատր: Ընտանի:

11. Լրացրէք այս վարժութիւնը:

Հացը ուտելիք է, իսկ բաժակը... Վերարկուն հագուստ է, իսկ երեսուրբիչը... Սաւանը սպիտակեղէն է, իսկ գինին... Տապակածը ուտելիք է, իսկ թէյը... Շապիկը սպիտակեղէն է, իսկ ինքնաեռը... Աթոռը կարասի է, իսկ շիշը... Ջուրը խմելիք է, իսկ կուժը...

30. Ա Ն Չ Ր Ե Ի

Անձրև՝, անձրև՝, ցած արի,

Բրացուր ցորեն ու դարի,

Յրացնը ծաղիկ, կանաչ խոտ,
Ալէ փոշի, մաքրէ օղ:
Անձրև, անձրև, ցած արի,
Գալզ ամենիս բարի:

31. ԸՆԾԱՆԻ ԵՒ ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԳԱՆԻՆԵՐ

Հաւը մեզ համար ձու է ածում և տանից չի հե-
ռանում. իսկ կաքաւը, սարեակը, ծիծեռնակը ազատ
թռչուններ են. նրանք, ուր ուզում, թռչում, զնում են:
Ջուրը պահպանում է ոչխարների հօտը և մարդկանց
տները, հաւատարիմ ծառայում է մարդուն: Իսկ գայլը,
աղուէսը շրջում են անտառներում, մտնում են գիւղերը,
ոչխար, հաւ ճանկում ու տանում, լափում են: Կովը
մեզ համեզ կաթն է տալիս, եզն ու ձին օգնում են
գիւղացուն աշխատանքի ժամանակ, իսկ արջը կատա-
ղի գազան է, մարդուն թշնամի: Հաւը, շունը, կովը,
ձին, ոչխարը — ընտանի կենդանիներ են, իսկ կա-
քաւը, գայլը, աղուէսը, արջը — վայրենի:

Ը ն տ ա ն ի կ ե ն դ ա ն ի ն ե ր : — Ձի, կով, խոզ, կատու, շուն,
ոչխար, այծ, ուղտ, էջ, գոմէջ:

Վ ա յ ը ե ն ի կ ե ն դ ա ն ի ն ե ր : — Արջ, աղուէս, գայլ, առիւծ,
վագր, նապաստակ, ճագար, սկիւռ:



32. ԳԱՌՆՈՒԿ

Սիրուն, անմեղ իմ գառնակ,
Յուրդդ սպիտակ ու փափուկ,
Գաշտ վագելով ու արօտ,
Մօրդ քաշում ես կարօտ:
Մի լար, գառնակ սիրական,
Փոքրիկ սպի գու նման.
Կըզայ մայրդ, հեռը շատ
Կըբերէ քեզ անուշ կաթ:

33. ԿԵՆԳԱՆԻՆԵՐԻ ՎԷՃԸ

Կովը, եզը և շունը վիճում էին միմեանց հետ,
թէ իրանցից որին տէրը շատ է սիրում:

— Իհարկէ նա ինձ ամենքիցդ շատ է սիրում, — ասաց
եզը. — ես նրա արօրն ու գութանն եմ քաշում, նրա
համար փայտ եմ կրում: Նա ինձ լծում է սայլին, ցո-
րենը ջրազաց տանում, աղում է, քաղաքում ծախում
և իրան ապրուստը անում: Ես որ չլինիմ, նա լինչ-
պէս կարող է ապրել:


— Զէ, նա ինձ է շատ սիրում, — վրայ բերեց կովը. —
եւ նրա ընտանիքը կաթնովս եմ կերակրում: Այն մա-

ծունն ու թանր, այն սերն ու կարագը, այն իւղն ու պանիրը, որ նրանք վայելում են, ո՞ւմ տուածն է: Եթէ ես չլինիմ, բոլորը քաղցած կրկոտորուին:

— 2է, չէ, ինձ երկսիցդ էլ շատ է սիրում,—օոնաց շունը,—ես նրա ունեցած-չունեցածն եմ պահպանում:

Տէրը լսեց նրանց այո վէճը և ասաց.

— Բաւական է վիճէք. դուք շգիտէք, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք և ո՛չ մէկդ միւսի արածը չէք կարող անել: Այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց:



34. Տ Ա Տ Ն Ո Ւ Կ Ո Վ Ր

— Արի, իմ կովիկ,
Հազրել եմ կովկիթ,
Պըպըզեմ տակիդ,
Քաշեմ քո պտիկ:

Մի վախիր, կովիկ,
Հորթիդ կրտամ կաթ,
Նրա համար մաս
ես կըթողնեմ շատ:

Կովը լի կուրծքը
Բացեց համարձակ,
Կաթը վեր թողեց
Իւր կրծքից արձակ:

Բայց անզույթ տատը
Քաշեց ու մզեց,
Հորթուկի համար
Կաթիլ չթողեց:


35. Գ Ա Ռ Ն Ե Ր Ն Ո Ւ Գ Ա Յ Լ Ը

Ոչխարների հօտն արածում էր անտառի մօտ. երկու գառը հեռացել էին հօտից և ուրախ-զուարթ խաղում էին ծառերի մէջ:

— Չարութիւն մի անէք, գառնակներ,— ասաց մի պառաւ ոչխար,— կարող է մի փորձանք պատահել:

— Ոչխարը սուտ է խօսում,— թփերի միջից ձայն տուեց գայլը.— նա պառաւ է և չի կարող ձեզ պէս խաղալ ու թռչկոտել, դրա համար էլ նախանձում է ձեզ: Որքան ուզում էք, վազվզեցէք այս գեղեցիկ անտառի մէջ:

Յիմար գառներն այդպէս էլ արին. նրանք թողին, հեռացան հօտից: Գայլի ուզածն էլ այդ էր: Նա բռնեց գառներին ու կերաւ:



36. Կ Ո Ր Ա Ծ Հ Ո Ր Թ Ը

Չիւն էր գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև՝ կաթիլ-կաթիլ.
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթն էր փնտրում գաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,
 Կուրծքն ու ծծեր կաթնով լիքը.
 «Հորթուկս սւր է», նա բառաչեց,
 Խեղճ պառաւին լացացրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
 Ողբում էին լաց ու կոծով,
 Յանկարծ լսուեց մի բարակ ձայն.
 Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառաչելով,
 Պառաւը գնաց տընքտընքալով.
 Կորած հորթը մօրը գտաւ,
 Լիք ծծերը բերանն առաւ:

Ծծեց բոլոր կաթն ու տուրեց,
 Տանտիկնոջը բան չլծողեց.
 Բայց պառաւն այս անգամին
 Սիրով ներեց շար հորթուկին:

37. ԽՈՏԱԿԵՐ ԵՒ ՄՍԱԿԵՐ ԿԵՆՊԱՆԻՆԵՐ

Գայլը շատ անգամ ոչխարներ ու հորթեր է լափում:
 Աղուէսը սիրում է հաւի միս անուշ անել: Ըներն ու
 կատուններն էլ միս են սիրում: Բայց այդպէս չեն կո-
 վերը, ձիերը, այծերը, ոչխարները, նապաստակները:
 Կովերն ու ձիերը ամառը կանաչ են ուտում, իսկ
 ձմեռը—խոտ: Նապաստակը ձմեռը ծառերի արմատ-
 ներն է կրծում, իսկ գարունն արածում է մարգագետին-
 ներում: Ահա թէ ինչո՞ւ կենդանիներից միքանիսին մենք
 խոտակեր ենք անուանում, իսկ միւսներին — մսակեր:

Ի՞նչ խոտակեր եւ մսակեր կենդանիներ եք տեսել:

ԳՐԵԻՈՐ ՎԵՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

12. Գրեցէք ձեզանից միքանի բաղմամբանի բառեր:

13. Վանկեցէք այս բառերը:

Կը-տոր: Մնալ: Գնալ: Մըկ-ըատ: Կտրել: Խնդիր: Չնծարիկ:
 Թոշուն: Թշնամի: Խնձոր: Մանր: Կայսր: Ծունր: Բարձր:

14. Լրացրէք այս վարժութիւնը:

Իմ՞ գիրքը — գիրքս: Բո՞ գիրքը — գիրքդ: Երա՞ գիրքը —
 գիրքն (գիրքը): Իմ՞ մայրը — մայր +: Բո՞ մատիտը — մատիտ +:
 Բո՞ գլուխը — գլուխ +: Իմ՞ գրիչը — գրիչ +:

15. Լրացրէք այս վարժութիւնը:

Զին՞ ընտանի կենդանի է, իսկ աղուէսը... Արջը վայրենի
 կենդանի է, իսկ կովը... Խոզը... Գայլը... Առիւծը... Վագրը... —
 Շունը մսակեր կենդանի է: Այծը... Ոչխարը... Էջը... Գայլը...
 Առիւծը... Ուղտը... Զին... Արջը...

16. Լրացրէք այս վարժութիւնը:

Թուղթը սպիտակ է: Երկինքը... Զինը... Կուսը... Վարդը...
 Մանուշակը... Արիւնը... Կարագը... Լեղակը... Մուրը... Ծուխը:



38. ՆԱՊԱՍՏԱԿ

Մի վագիր այդչափ արագ,
 Ի՞մ սիրունիկ նապաստակ,

Չատ փոքրիկ եւ տակաւին,
Թաթիկներդ կըյողնին:

Քեզ կըբերեմ կաթն ու հաց
Չարրեջրով համեմած.

Ուտես, խմես, զօրանաս,
Բանից կարօտ չմնաս:

Ծանր-ծանր կըքայլես,
Սիրտս վեր-վեր կըհանես.
Կարձակեմ քեզ, երբ ուզես,
Կերթաս, ազատ կարածես:

39. Գ Ա Յ Լ Ն Ո Ի Ա Յ Ժ Ը

Բարձր, քարքարոտ սարի գլխին արածում էր
վայրենի այծը, իսկ ներքեւ, սարի տակ, քաղցած
գայլն էր թափառում: Նա ձայն տուեց այծին.

— Ինչո՞ւ եւ այդ քարերի մէջ արածում, սիրելի
այծիկ. ցած արի, այստեղի կանաչ, հիւթալի խոտը
վայելիր:

— Հիւթալի խոտը քեզ համար պահիր, գայլ եղ-
բայր, — պատասխանեց այծը. — ինձ այստեղ էլ բա-
ւական կերակուր կայ:

Առածներ. — Գայլն ամէլ օրը կուրախանայ: — Գայլն ընկաւ
ոչխարի մէջը, վա՛յ մէկի աիրոջը:

40. Թ Ռ Չ Ո Ի Ն Ն Ե Ր

Բարձր ամպերի միջից թռչում է արծիւր: Սրա-
տես աչքերը չորս արած, նա որս է որոնում: Յան-

կարծ նետի պէս յարձակում է մի որեւէ կենդանու
կամ թռչունի վրայ, յափշտակում է նրանց և ճանկերի
մէջ առած՝ իւր բունն է տանում: Բազէն էլ արծուի
նման գիշատող թռչուն է: Բայց այդպէս չեն մեր
ընտանի թռչունները — հաւերը, բաղբը, սագերը, հնդ-
կահաւերը: Նրանք կերակրում են հատիկներով, բզէզ-
ներով, որդերով և հացի փշրանքներով: Մարդիկ նրան-
ցից շատ օգուտներ են ստանում: Փոքրիկ ծիծեռնակը,
ղեղձանիկը, արտուտիկը, քաղցրաձայն սոխակը զուար-
ճացնում են մեզ իրանց երգերով: Մարդիկ նրանց
ե Ր Գ Ո Գ թռչուններ են անուանում:

Ընտանի թռչուններ: — Հաւ, սագ, բաղ, հնդկահաւ, աղաւնի:

Գիշատող թռչուններ: — Արծիւ, ցին, բու, բազէ, ագռաւ:

Երգող թռչուններ: — Սոխակ, ղեղձանիկ, արտուտ, սարեակ,
ծիծեռնակ:

Գ Բ Ե Ի Ո Բ Վ Ե Բ Ժ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ

17. Լրացրէք այս վարժութիւնը:

Սագ — սագիկ: Բաղ — ... Հատ — ... Կուտ — ...: Ծոն — ...
Բուն — ... Այծ — ... Մայր — ... Հայր — ... Բոյր — ...
Տուն — տնակ: Թռչուն — ... Գունդ — ... Նաւ — ...

18. Վանկեցէք հետեւալ բառերը:

Ըգ-գոյշ: Սարնոգ: Զգալ: Զմայլել: Ծտապել: Ստանալ: Սպա-
սել: Սպանել: Ստոր: Ծտեմարան:

19. Գրեցէք և ւ տառի տակ գիծ քաշեցէք:

Հաւ: Կաւ: Նաւակ: Թագաւոր: Հիմաւոր: Տարաւ: Կերաւ,
Եկաւ: Թիւ: Անիւ: Ազնիւ:

20. Արտադրեցէք և վ տառի տակ գիծ քաշեցէք:

Վարդ: Վերմակ: Վարդան: Ով: Ովկիանոս: Նաւավար: Կա-
նավարեր: Զօրավար: Գրականատ:

21. Առանձին խմբերի բաժանեցէք:

Սագ: Բու: Մատիս: Վագր: Եգ: Բառ: Գիրք: Սոխակ: Գրն-
դակ: Բազմոց: Բանոն: Տիկնիկ: Մահճակալ: Աթոռ: Սպունգ:
Վէգ: Վերարկու: Երեսարար: Շապիկ: Գուլպայ: Թաշկինակ: Բա-
ժակ: Կաթսայ: Ինքնատե: Թանաքաման: Հաց: Տապակած: Սուրճ:
Գինի: Օղի: Սպաս: Փլաւ:

41. Թ Թ Չ Ն Ա Կ Ի Բ Ո Ի Ն Բ


Մանուկներն իրանց պարտիզում մի թռչնի բուն
գտան: Այնտեղ նստած էին եր-
կու փոքրիկ, մերկ ձագուկներ:
Մանուկները վեր առան նը-
րանց և բերին տուն: Հայրն
ասաց նրանց.



— Ձաւակներս, դուք շատ
վատ բան էք արել. դուք գի-
տէք, թէ որքան կրտսրեն ու կըվշտանան սրանց
ծնողները, երբ իրանց ձագուկներին չգտնեն բնի մէջ:
Բացի դրանից, սրանք շուտով կըսատակեն, սրովհետև
դուք չէք կարող կերակրել:

Մանուկները սաստիկ խղճացին ձագերի վրայ և
նրանց յետ տարան պարտէզն ու դրին իրանց բնի մէջ:

42. Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ



Խեղճ ծիծեռնակը, տես, ամե-
նեին չէ հանգստանում. ամբողջ օրը
թռչում է, ծղօտներ է հաւաքում,
կտուցովը կաւ է կրում, իւր հա-
մար բուն է շինում: Բունը շինում,
վերջացնում է թէ չէ, մէջը երեք
ձու է ածում, նրանց վրայ երեք
չաբաթ պինդ նստում և փոքրիկ
ձագուկներ է հանում: Ձագուկները
որ դուրս են գալիս, բերանները բաց են անում և կե-
րակուր խնդրում: Ծիծեռնակը թռչում, դէտուղէն է
ընկնում, մծեղներ բռնում ու նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում, ձագերը
թեւաւորում են, բնիցը դուրս թռչում և իրանց մօր
հետ ճանապարհ ընկնում, — կապոյտ ծովերի, բարձր
տարերի վրայից անցնում:

43. Հ Պ Ա Ր Տ Ա Ք Ա Ղ Ա Ղ

Երկու արագաղ կռուեցին և մէկը յաղթեց միւսին:
Յաղթուողը փախաւ, սրահի տակը մտաւ, իսկ յաղ-
թողը բարձրացաւ կտուրը և հպարտ-հպարտ „ծուղրու-
ղճ“ կանչեց: Այդ բոպէին արծիւը թռչում էր վերևից.
Նա նկատեց հպարտացող արագաղին, յարձակուեց նրա
վրայ, բռնեց ու տարաւ, անուշ արաւ:

Առաժ.— Ով որ փքանայ, շուտով չքանայ:

44. ՄՈՂՏՈՒՆՆԵՐ ԵՒ ՉԿՆԵՐ

Գորտը չորս ոտն ունի: Օձը ոտներ չունի. նա իւր երկար մարմինը քաշ է տալիս գետնի վրայ: Չոր տեղերում, անտառում և դաշտում, դուք կրտեսնէք գեղեցիկ մողեսին: Թէ գորտի և թէ մողեսի փորը ման գալիս քսում է գետնին: Գորտերն ու մողեսները չեն կարող վնասել մեզ, սրովհետև թոյն չունին: Իսկ օձերը թունաւոր են: Նրանց կծածը վտանգաւոր է և շատ մարդիկ են մահացել նրանց թոյնից: Բայց ջրային օձերն էլ գորտերի և մողեսների նման թոյն չունին: Նրանց ատամներն այնքան մանր են, որ չեն կարող մարդու կաշին ծակել:

Բոլոր այս կենդանիները սողուն են կոչում:

Ծովերում ու գետերում շատ տեսակ-տեսակ ձկներ են ապրում: Նրանք լողում են իրանց լողնակներով. ձկները սառն արիւն ունին. նրանց մարմինը ծածկուած է թեփուկներով:

Սողուններ: — Մողես, գորտ, օձ, կրիայ:

Չկներ: — Կարմրախալտ, գալաձուկ, օձաձուկ, կապույտ, տառետ, կողակ:



45. ԳԻԻՂԱՅԻՆ ԵՒ ՕՁԸ

Չմեռն էր: Գիւղացին անտառ գնաց փայտ կտրելու: Փայտ կտրելիս նա տեսաւ մի օձ, որ ցրտից սառել, փետացել էր: Բարի գիւղացին խղճաց օձին, վերցրեց, զրեց

կրակի մօտ, որ տաքանայ: Օձը տաքացաւ թէ չէ, վրայ հասաւ, որ կծէ գիւղացուն:

— Ապերախտ, — ասաց մարդը, — իմ լաւութիւնը դրանով ես վճարում: — Ասաց ու կացնով խփեց, գլուխը ջախջախեց:

Առաջ. — Օձն իրան տաքացնողին կրկծէ:

46. ՄԻՋԱՏՆԵՐ

Գարունը բացւում է թէ չէ, հազարաւոր միջատներ են սկսում երևալ: Օդի մէջ մոծակներն ու մլակներն սկսում են իրանց զարնանային պարը: Նախշուն թիթեռները, ոսկեգոյն բզէզները, կանաչ մորեխները խաղում, գուարճանում են արեգակի ճառագայթների տակ: Բրզզում է պիծակը, երգում, թռչկոտում է անգործ ճանճը: Մեղուն, ծաղկից ծաղիկ թռչկոտելով, քաղցր մեղր է ժողովում: Իսկ աշխատասէր մրջինն անագին բեռը շալակած, վազում, շտապում է իւր քանդուած բունը նորոգելու:

Միջատներ: — ճանճ, բզէզ, թիթեռ, մեղու, մրջին, մոծակ, մլակ, պիծակ, մորեխ, սարդ, ճպուռ:

ԳՐԵՒՈՐ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

22. Գրեցէք և ուր որ հարկաւոր է և կամ վ գրէք:

Մեր դրացին գրա+ածառ է: Առա+օտը ես դպրոց պիտի գնամ: Վարդա+տինն մեզ մօտ հիւրեր կըզան: Հայրս գեղեցիկ

գա+ագան գնեց: Գիւղացին մի օրա+ար հող ունի: Թագա+որը գո+եց իւր գօրա+արներին:

23. Գրեցէք և ուր որ հարկաւոր է օ կամ ո դրէք:

Ես հ+ըս նամակ գրեցի: Գիւղացին հ+ընց ցորեն է հանում: Մաթենիկը իւր մ+ը հետ նստած է այգում: Մ+ըին թուի է: Վարդն անուշ հ+տ ունի: Հովին իւր հ+տը քշեց դէպի դաշտ:

24. Լրացրէք այս վարժութիւնը:

Տառելսը ձուկ է, իսկ բզեզը... Թիթեռը միջատ է, իսկ գորտը... Ճպուռը միջատ է, իսկ կարմրահայտը... Մողեսը սողուն է, իսկ մլակը... Կրիան սողուն է, իսկ մըջիւնը...



47. ՄԵՂՈՒՆ ՈՒ ԹԻԹԵՌԸ

— Մխ, ափսոս, որ անձրև է գալիս,— ասաց թիթեռը և թաք կացաւ տերևների տակ:

— Այո, ափսոս,— ձայն տուեց մեղուն, որ նստած էր նրանից ոչ հեռու:

— Եթէ լաւ եղանակ լինէր,— նորից ասաց թիթեռը,— ես կըթռչէի դէպի դաշտ, կըխաղայի և կըզուարճանայի:

— Իսկ ես կըգնայի իմ գործին և մեղր կըժողովէի ծաղիկներից,— ասաց մեղուն:

48. Մ Ե Ղ Ո Ւ

Հն, ծագեցաւ արեգակը,

Հն, ծագկեցաւ մանուշակը,

Մեղուն թողեց իւր փեթակը՝ ճրգտըզալով, տըզտըզալով:

Մեղուն թռաւ ծաղկից ծաղիկ, Մեղր առաւ քաղցր, անուշիկ, Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ՝ Պըզպըզալով, պըզպըզալով:

Անուշ մեղրը մանր տղոց, Դեղին մոմը ամեն սրբոց, Իսկ շարերին կըճ ու խայթոց՝ Կըսկըծալով, կըսկըծալով:

49. ՄՐՋԻՆՆԸ ԵՒ ԱՂԱՒՆԻՆ

Մրջիւնը ծարաւ էր: Նա մօտեցաւ առուակին, որ ջուր խմէ: Յանկարծ նա ջուրն ընկաւ և քիչ էր մնում, որ խեղդուի: Այդ բոպէին առուակի վրայով մի աղաւնի էր թռչում: Նա տեսաւ ջրի երեսին փռուած մըրջիւնին և խղճաց վրան: Իսկոյն շտապեց, ծառից մի տերև պոկեց ու զցեց առուակի մէջ: Մրջիւնը բարձրացաւ տերևի վրայ և խեղդուելուց ազատուեց:

Առուակի մօտերքը մի որսորդ թռչուններ էր որսում: Նա տեսաւ մեր աղաւնուն, որ պատի վրայ նստած հանգստանում էր: Չար որսորդը հրացանը ուղղեց նրան, որ սպանէ: Մրջիւնը նկատեց այս բանը և վազեց, պինդ կծեց որսորդի ձեռքը: Որսորդը ցնցուեց, հրացանը տրաքեց, բայց չզիպաւ աղաւնուն:

Ա ո ա ծ.— Ինչ որ ցանես, այն կընճես:



50. ԹԻԹԵՌ ԵՒ ՄԱՆՈՒԿ


Մ Ա Ն Ո Ւ Կ .

— Սիրուն թիթեռ, ինձ ասա,
Թէ ինչնով ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ի՞նչպէս է, որ չես յոգնում:

Թ Ի Թ Ե Ր

— Սիրուն, կանաչ դաշտերում
ես ապրում եմ համարձակ,
Ծաղկանց բուրմուռքը անուշ
իմ կերակուրս է միակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ է,—
Նա մի օրից չէ երկար.
Բարի եղիր, սով մանուկ,
Խնայիր ինձ, ձեռք մի տար:



51. ԾԻՆՈՒԹԻՆՆԵՐ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Մարդիկ ապրում են շինութիւն-
ների մէջ: Չինութիւնները լինում
են քարէ և փայտէ: Քարէ շի-
նութիւնները շինում են որմնա-
ղիւնները տաշած քարից և աղիւսից,
իսկ փայտէ շինութիւնները — հիւանդները՝ գերանները

րից: Չինութիւնները շինելիս և ուրիշ գործերի ժա-
մանակ հարկաւոր են զանազան գործիքներ:

Շինութիւններ:— Տուն, գարոց, գործարան, ամբար (շտե-
մարան), սրահ, գոմ, շրաղաց, ախոռ:

Գործիքներ:— Գանակ, սղոց, հերոն, ունելիք, մուրճ, կացին,
ուրագ, մկրատ, պատառաքաղ, ածելի, բահ, թի, դուր, ասեղ, հար-
թիչ, խոփ, գուլթան, արօր, գերանդի, փոցիս, մանգաղ, կամ, եղան:

52. ԾԱՌԵՐ ՈՒ ԹՓԵՐ

Ծառերն ու թփերը լինում են պտղատու և հա-
սարակ: Մարդիկ պտղատու ծառերն ու թփերը
տնկում են պարտէզներում. իսկ հասարակ ծառերն ու
թփերը անտառներում են բուսնում: Ծառերից միքա-
նիսը ծածկուած են լինում տերևներով, իսկ միւս-
ները — փշերով: Ծառերը մարդիկ կտրում են և ստա-
ները — փայտից իրանց համար բնակարաններ, նաւեր,
կարասիներ և ուրիշ տեսակ մանր-մունր բաներ են
չինում — ամաններ, խաղալիքներ, դասական առար-
կաներ և այլն:

Ծառեր (հասարակ և պտղատու):— Կաղնի, մայրի, եղևնի,
ուռենի, կէչի, կեռասենի, տանձենի, խնձորենի, սալորենի, բալենի,
ընկուզենի, թթենի, թզենի:

Թփեր:— Մորենի, մոշի, վարդենի, մասրի:
Պտուղներ:— Խնձոր, սալոր, տանձ, բալ, նարինջ, կետրոն:

ԳՐԱԴՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

25. Գրեցէք այս բառերը և ե տառի տակ գիծ քաշեցէք:

Հոտաւտ: Ծաղկաւտ: Բաշապէս: Մեծապէս: Բարեղէն: Հո-
ղեղէն: Ծշտօրէն: Հայերէն: Ռուսերէն: Զրօրհնէք: — Գնացէք: Կե-
րէք: Կրգրէք: Կուտէք: Կրտեսներ: — Յովհաննէս: Վրդանէս: Սա-
մուէլ: Արէլ: Սուրէն: Ռուբէն: Արմինէ:

26. Գրեցէք և սեր սր հարկաւոր է ե կամ ե գրէք:

Կով+ըն արածում +ն խոտաւ+տ դաշտում: Կայ+նն սպա-
ն+ց Ար+լին: Այսօր մենք հայեր+ն դաս ունինք: Հեղին+ն Սա-
մու+լին գիրք ընծայ+ց: Մարդիկ հողեղ+ն արարածներ +ն:

27. Լրացրէք այս վարժութիւնը:

Դանակը գործիք է, իսկ դպրոցը... Օձը սողուն է, իսկ բահը...
Մայրին ծառ է, իսկ մուրձը... Մորենին թուփ է, իսկ խնձորը...
Բայենին պտղատու ծառ է, իսկ եղևնին... Տանձը պտուղ է, իսկ
դուրը... Վարդենին թուփ է, իսկ արջը... Մեղուն միջատ է, իսկ
սալորենին...



53. Ա Ն Տ Ա Ռ

Ի՞նչ գեղեցիկ է անտառը: Ինչքան որ ներս ես
գնում, այնքան հանդարտ է, այնքան սքանչելի է:

Բարձր, սիրուն ծառերը կտրում են ճանապարհը:
Ծառերի կանաչ տերևների միջով կապոյտ երկինքն է
երևում: Ճղների վրայ երգում են հազարաւոր թռչուն-
ներ: Բացի ծառերից անտառում շատ թփեր էլ կան:
Ծառերի տակ, թփերի մէջ, բազմաթիւ կենդանիներ
են ապրում—նապաստակ, աղուէս, եղջերու. կան և
գիշատող զագաններ—գայլ, արջ:

54. Թ Ե Ր Ո Ի Ն Ի Ն Ե Ի Մ Ա Հ Ը

Մի ծերունի անտառում քիչ փայտ կտրեց, կապեց,
շալակն առաւ և գնաց դէպի տուն: Բեռը բաւական
ծանր էր, տունն էլ հեռու: Ճանապարհին նա յոգնեց,
փայր դրեց բեռը և ասաց.

—Ա՛խ, երանի թէ մահը գար, հոգիս առնէր:

Մահն էլ, կարծես, հէնց այդտեղ լինէր: Նա մօ-
տեցաւ մարդուն և հարցրեց.

—Ահա ես, ի՞նչ ես ուզում:

Ծերունին սաստիկ վախեցաւ և պատասխանեց.

—Ես քեզ կանչեցի, որ այս փայտը շալակս տաս:

55. ՀԱՅԱԲՈՅՍԵՐ, ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԺԱՂԻԳՆԵՐ

Երկիրը մարդուն ձրի չի կերակրում: Չատ պէտք է
չարչարուի երկրագործը, շատ քրտինք պէտք է թափէ,
որ առատ հաց ստանայ: Գիւղացին արօրով ու գու-
թանով վարում է հողը, ցաքանով ցաքանում և յետոյ

զանազան բոյսեր է ցանում: Արտերում նա ցանում է հացաբոյսեր, բանջարանոցներում — շատ բանջարեղէններ, իսկ պարտէզներում — զեղեցիկ ծաղիկներ:

Հացաբոյսեր: — Յորեն, գարի, հաճար, վարսակ, բրինձ, կորեկ:

Բանջարեղէններ: — Գետնախնձոր, գազար, սոխ, կաղամբ, սիսեռ, բոզկ, վարունգ...

Ծաղիկներ: — Վարդ, շուշան, կակաչ, մեխակ, անթառամ, մանուշակ, ձնծաղիկ:

56. Մ Ա Ն Ո Ի Ծ Ա Կ

Կասկոյտ զլիտով, կանաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէև տունկս փոքրիկ է, ցած,
Արօտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջս ամենի առն՝
Թէ աղբատի, թէ մեծատան,
Իբրև դարնան առաջին զարդ,
Կարէ տեսնել ամեն մի մարդ.
Ես եմ սիրուն դարնան գուշակ.
Իմ անունս է մանուշակ:



57. Մ Ե Ր Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ն Ե Ր Ն Ո Ի Թ Շ Ն Ա Մ Ի Ն Ե Ր Բ

Մարդիկ շատ թշնամիներ ունին գազանների, թռչունների և միջատների մէջ: Գիշատիչ գազաններն ու թռչունները յարձակում են մեր ընտանի կենդանիների և թռչունների վրայ: Ըստ միջատների ահագին վնաս են հասցնում մեր դաշտերին, անտառներին, այգիներին և բանջարանոցներին: Մակայն մենք բազմաթիւ բարեկամներ էլ ունինք կենդանիների մէջ: Ըստ փոքրիկ գազաններ և թռչուններ ոչնչացնում են վնասակար միջատներին. մեղուները մեզ քաղցր մեղր և մեղրամոմ են տալիս, իսկ շերամը մետաքս է պատրաստում:

Մ եր բ ար ե կ ա մ ն եր ր: — Խլուրդ, ոզնի, ագռաւ, ծիծեռնակ, գորտ, մեղու, շերամ, սարեակ, կտցար:

Մ եր թ շ ն ա մ ի ն եր ր: — Գալլ, արջ, աղուէս, մուկ, բազէ, ցին, թիթեռ, մորեխ:

58. Հ Ա Ն Ք Ե Ր

Մարդիկ երկրից զանազան մետաղներ են ձեռք բերում — ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, արճիճ: Մետաղներից շինում են շատ առարկաներ՝ բահ, խոփ, սղոց, կացին, ուրագ, օդեր, մատանիներ: Երկրի մէջ կան և բազմաթիւ հասարակ ու թանկագին քարեր: Հասարակ քարերը մարդիկ գործ են ածում շինու-

Թիւնների համար, իսկ թանկագին քարերը — զարդարանքների:

Մե տ ա ղ ն եր: — Ոսկի, արծաթ, պլատին, պղինձ, երկաթ, պողպատ, արճիճ, կլեկ:

Հ ա ս ր ա կ և թ ա ն կ ա գ ի ն ք ար եր: — Որձաքար, չեչաքար, կալճաքար, կրաքար, աղքար, ադամանդ, զմրուխտ, յակինթ:

Գ Բ Ա Ռ Ր Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

28. Արտագրեցէք և յ տառի տակ գիծ քաշեցէք:

Ես մի քահանայ տեսայ: Այս երեկոյ ընկերս կրգայ: Էսօր ուայ գործը վաղուան մի՛ թողնիր: Ամառուայ փուշը — ձմեռուայ նուշն է: Մինչև տղան չլայ, մայրը նրան ծիծ չի տայ:

29. Արտագրեցէք այս բառերը:

Ասա՛: Գնա՛ :Արա՛: Կարդա՛: Խաղա՛:—Աննա: Եղիա: Երեմիա: Ովսաննա: Խտալիա:—Սա: Դա: Նա: Ահա: Այո: Բո:

30. Լրացրէք այս վարժութիւնը:

Գարին հացաբոյս է, իսկ ոսկին... Ծուշանը ծաղիկ է, իսկ աղամանողը... Կիտրոնը պտուղ է, իսկ վարունգը... Կակաչը ծաղիկ է, իսկ չեչաքարը... Թզենին պտղատու ծառ է, իսկ ուռնին... Ծիծեռնակը մարդուն քարեկամ է, իսկ մորեխը...

59. Ո Ս Կ Ի Ն Ե Ի Ե Ր Կ Ա Թ Ր

Մի անգամ ոսկին ու երկաթը վիճում էին միմեանց հետ:

—Ես ամենից լաւ մետաղն եմ,—ասում էր ոս-

կին.—ամենքը սիրում են ինձ և լաւ պատիւ են տալիս: Մարդկանց համար ես փող էլ եմ, զարդարանք էլ: Ինձանից, ինչ ասես, շինում են՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիներ, օղեր: Էհ, էլ թանկագին մանեակներ, ամբողջ աշխարհը ի՞նչ երկարացնեմ, եթէ ուզենամ, ամբողջ աշխարհը կըգնեմ:

—Չ՛ատ ես պարծենում, ոսկի՛ աղա,—պատասխանեց երկաթը.—ճշմարիտ է, մարդիկ քեզ շատ երես են տալիս, բայց մենակ դու չես աշխարհիս տէրը: Եթէ մարդ ուզում է ապահով ապրել, նրան երկաթ էլ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով էլ է հարկաւոր. հաց ունենալու համար ոսկէ արօշեն կտրում փայտը. հաց զազաններից պաշտպանուելու րով չեն վարում հողը. գազաններից պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում: Եթէ դու, ոսկի՛ աղա, կարող ես աշխարհը գնել, ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել:

Առաձն եր:—Ոսկին պատիկ է, բայց զինը մեծ է:—Երկաթը տաք-տաք կըծեծեն:

60. Ջ Ո Ւ Ր

1.

Ջուրը լինում է ջրհորներում, աղբիւրներում, լճերում և ծովերում. նա մեզ հարկաւոր է խմելու, կերակուր պատրաստելու և զանազան բաներ լուանալու համար: Ջուրը պտրտացնում է ջրաղացի անիւները: Ջրով հանգցնում են կրակը, ջրում են պարտէզները,

այգիները, բանջարանոցներն ու արտերը: Գետերի, լճերի և ծովերի մէջ ապրում են ձկներ, գորտեր և ուրիշ շատ կենդանիներ: Սագերը, բաղերն ու կարապներն էլ սիրում են լող տալ ջրի երեսին:

XX.

Ձմեռ ժամանակ ջուրը սառչում, սառոյց է դառնում: Անձրևի տեղ ձմեռը ձիւն է գալիս: Չիւնն ու սառոյցը գարնանը հալում են և ջուրը հոսում է դէպի գետերն ու լճերը: Տարութիւնից ջուրը եռում, գոլորչի է դառնում: Անձրևը շատ հարկաւոր է ծառերի, թփերի, խոտերի և ուրիշ բոյսերի համար: Առանց ջրի բոյսերը կըչորանան:

61. Մ Ա Ր Գ Ո Ի Մ Ա Ր Մ Ի Ն Ը

Մարդու մարմնի մասերն են՝ գլուխը, պարանոցը, բունը, ձեռքերը և ոտքերը: Ձեռքերով մենք աշխատում ենք, իսկ ոտքերով ման ենք գալիս: Մարդը պէտք է կերակրուի, որ նրա մարմինը առողջ և ուժեղ լինի: Կերակուրը մարաւում է ստամոքսի մէջ:

Մարմնի մասերը:—Գլուխ, պարանոց, բուն, ձեռքեր, ոտքեր:

Գլխի մասերը:—Գանգ, ճակատ, քիմքեր, յօնքեր, կոպեր, աչքեր, ականջներ, աչտեր, քիթ, շրթունքներ, բերան, կզակ:

Բնի մասերը:—Կուրծք, փոր, կողեր, մէջք:

Ձեռքի (թւի) մասերը:—Ուս, արմունկ, գաստակ:

Ոտքի մասերը:—Ս.գզը, սրունք, գարշապար:

62. Հ Ի Ն Գ Զ Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք

Մենք աչքով տեսնում ենք, ականջով լսում, քթով հոտ քաշում, լեզուով համն իմանում, իսկ մատներով շօշափում ենք և իմանում, թէ առարկան պի՞նդ է թէ փափուկ, սա՞նը թէ տաք, հա՞րթ թէ անհարթ:

Աչքը տեսողութեան զգայարանքն է, ականջը—լստողութեան, քիթը—հոտառութեան, լեզուն—ճուշակելիքի, իսկ մատները և ամբողջ մարմինը—շօշափողութեան:

63. Գ Ա Ր Ո Ի Ն

Ջերմիկ փայլեց արեգակը,
Դարձաւ մեզ մօտ ծիծեռնակը,
Աչքը բացեց մանուշակը,
Հասաւ գարնան եղանակը:

Անգը թնդաց գոռգոռալով,
Չիթ-չիթ անձրև ծործորալով.
Դաշան ու սլարտէզ գոռարթացան.
Ահն կապեց և ծիածան:

Մեղուն թռաւ իւր փեթակից,
Փողուել մեզը ծաղիկներից.
Մրջնիկները խումբ-խումբ, շարքով,
Աշխատում են ժիր ու կարգով:

Օրհնած լինի գալիք, գարուն,
Գու եղանակ անուշ, սիրուն,
Չուտով բեր մեզ ուրախ գատիկ,
Ժիր գառնուկներ, կարմիր ձուիկ:

64. ՕՐԵՐ, ԱՄԻՄՆԵՐ ԵՒ ՏԱՐՈՒԱՅ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Չարաթն ունի եօթն օր—երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիւրակի: Օրերից կազմում են ամիսներ, ամիսներից—տարիներ: Տարին ունի տասներկու ամիս—յունուար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, օկտոբեր, նոյեմբեր, դեկտեմբեր:

լիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր:

Մարտը, ապրիլը, մայիսը—գարնան ամիսներ են. յունիսը, յուլիսը, օգոստոսը—ամրան. սեպտեմբերը, հոկտեմբերը, նոյեմբերը—աշնան. իսկ դեկտեմբերը, յունուարը և փետրուարը—ձմրան:

Գարունը, ամառը, աշունը և ձմեռը տարուայ չորս եղանակներն են:

Գ Բ Ը Խ Ո Ր Վ Ե Ր Թ Ո Խ Թ Ի Ի Ն Ն Ե Ի

31. Արտագրեցէր և ուր որ հարկաւոր է յ աւելացրէր:

Աննա՛, գնա՛, հայրիկին առա՛, որ գա ինձ մօտ: Ահա քո տետրակը, Եղիա: Գինովաբէ՛, մայրդ կը գա՞ այգի:—Այո, առաւսխաննց նա: Ճաշից յետո մի տղա կատրի տակ ընկաւ. ես մօտեցա, վեր առա եւ տարա տուն:

32. Գրեցէր և աւելացրէր պակաս տառերը:

Ոչխարն—ըի հ—տն արածում է ծաղկաւ—տ դաշտում: Աստ—ած պատժում է չար—ըին: Ո—տ որ կարդա—, —ետո—տ լա մարդ կը դառնա—: Կա—ից քրտաը աման է շինում: Արամ՛, գերջը ընկա—: Այս—ը անձը— է գայիս: Այս երեկո—, թէ—ից յետո— մեր Սուր—ինը նամակ պիտի գը— հ—ըը:

33. Լրացրէր հետևեալ վարժութիւնը:

Արճիճը մետաղ է, իսկ գլուխը... Կուրծքը ընի մասն է, իսկ ախանջը... Յունուարը ամսի անուն է, իսկ երեքշաբթին... Բունը մարմնի մասն է, իսկ զարունը...

34. Գրեցէր քանի դգայարանք ունի մարդը և սրտնը են նրանք:

35. Գրեցէր առանձին-առանձին օրերի, ամիսների և տարուայ եղանակների անունները:

65. Չ Ո Ր Մ Ե Ղ Ա Ն Ա Կ

Չիւնը հարում է, խտոր կանաչում, ծառերը ծաղկում, օրը երկարում: Այս ե՞րբ է լինում:

Ամիսներ անցան. օրերը տաքացան, ամպերը բարձրացան, անձրև թափեցին: Արտերն հասել են, հրնձող են կանչում: Այս ե՞րբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կարճացաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է մաղում և մութ գիշերը չորս կողմը բռնում: Այս ե՞րբ է լինում:

Դաշտ ու ձոր անձ ձիւնով ծածկուեցան, ծառերից սառցէ շիթեր կախուեցան: Մարդիկ քաշուեցան իրանց տները, իսկ գազանները իրանց բները: Դուրսը ցուրտ քամին փչում է, փչում և ձիւնի թեփով աչքերը լցնում: Այս ե՞րբ է լինում:

66. Մ Ա Ղ Թ Ա Ն Ք Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

Արի դու, արի,
Քո գալիք բարի,
Սիրուն նոր տարի,
Նոր օրեր բեր մեզ:

Չիւն տուր սարերին,
Անձրև՝ արտերին,
Կարկուտը՝ չարին,
Ձով արևը՝ մեզ:

Անթուփ ծաղիկից,
Անների կարմրուկից,
Բարի ցաւերից
Ազատ պահիր մեզ:

Մայրական պիտով,
Գրկաբաց ձեռքով,
Քաղցր ժպիտով
Առ քո վերկը մեզ:

67. ՉՈՐՍ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ

I.

Չմեռն էր: Աշոտը խաղում ու սահում էր սառույցի վրայ: Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ-ուրախ, կարմրած թշերով վազեց տուն և ասաց հօրը.

—Ախ, հայրիկ, ինչ պատուական եղանակ է ձմեռը: Ես կըրցանկայի, որ միշտ ձմեռ լինէր:

Հայրը հանեց իւր ծոցի տետրակը և նրա մէջ նշանակեց Աշոտի այս խօսքերը:

II.

Եկաւ գարունը: Աշոտը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց և յետոյ վազելով հօր մօտ՝ ասաց.

—Ինչ հիանալի է գարունը: Ես կըրցանկանայի, որ միշտ գարուն լինէր:

Հայրն Աշոտի այս ցանկութիւնն էլ նշանակեց իւր տետրակում:

III.

Հասաւ ամառը: Աշոտը իւր հօր հետ հնձի գնաց: Ամբողջ օրը մանուկը խաղում, դուարձանում էր—ձուկն էր որսում դետակից, ծաղիկներ հաւաքում և գլորում հոտաւէտ խոտերի մէջ. երեկոյեան նա ասաց հօրը.

—Ախ, հայրիկ, երանի թէ ամառը վերջ չունենար:

Աշոտի այս խօսքերն էլ գրուեցան նոյն տետրակի մէջ:

IV.

Վերջապէս եկաւ աշունը: Այգիներում սկսեցին պտուղները ժողովել: Աշոտն ուրախ-զուարթ դէս ու դէն էր վազում, ամեն պաղից էլ անուշ անում. վերջը մօտեցաւ հօրը և ասաց.

—Աշունը տարուայ բոլոր եղանակներից ամենալաւն է:

Այն ժամանակ հայրը բաց արեց իւր ծոցի տետրակը և ցոյց տուեց Աշոտին, որ նա գարնան, ձմրան և ամառուան մասին էլ միևնոյնն է ասել:

Առաջինը:—Գարնան գառն է գոզելի, աշնան հաւը:—Ամառուայ փուշը՝ ձմեռուայ նուշն է:—Գառը գարնան, ձիւնը ձմրան:

68. ՏՂԱՅՈՅ ԱՂՕԹՔ

Հայր մեր երկնաւոր, հայր ամեն մարդի,
Գու ինձ ամեն օր տաս հազար բարի—
Կեանք, լոյս, կերակուր, հայր և քաղցրիկ մայր,
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:
Իսկ ես ինչ ունիմ, որ ինչ տամ Գեղի.
Առջեզ կընկնեմ, կենամ աղօթքի.
«Շնորհդ սուր ինձ, որ ծնողներիս,
Ուսուցիչներիս և իմ մեծերիս
Լինիմ սիրելի, իսկ քեզ հաճելի»:

69. Հ Է Ք Ի Ա Թ

1.

Ժամանակով մարդու մէկը մի էլ ունէր, որը երկար տարիներ ծառայել էր նրան, իսկ այժմ ծերացել, ոյժից բոլորովին ընկել էր. դրա համար տէրը նրան վատ էր կերակրում և ուզում էր մորթել, կաշին հանել: Էջը հասկացաւ այս և մի օր գլուխն առաւ, փախաւ-գնաց: Գնաց-գնաց, ճանապարհին պատահեց մի որսկան շան: Խեղճ շունն այնպէս հեռւ էր, որ քիչ էր մնում շունչը կտրուի:

—Ինչո՞ւ ես այգպէս հեռւմ, շուն եղբայր,—հարցրեց մեր էջը:

—Ախ,—պատասխանեց շունը.—ես ծերացել եմ և էլ որսի գնալ չեմ կարող. դրա համար իմ տէրն ուզում էր ինձ սպանել. ես էլ գլուխս առայ, փախայ նրա մօտից: Բայց չգիտեմ, թէ ինչպէս պէտք է հաց ձարեմ:

—Գիտես, ինչ կայ,—ասաց էջը,—ես գնում եմ այս մօտիկ քաղաքը երգիչ դառնալու: Արի, ինձ հետ ընկերացիր, միասին գնանք: Ես կըրեգեմ, դու էլ թմբուկ կըխփես:

Չունը համաձայնուեցաւ և երկուսը միասին առաջ գնացին:

2.

Չատ գնացին, թէ քիչ, պատահեցին մի կատուի:
—Բարե, փխսիկ, ինչո՞ւ այգպէս տխուր ես,—հարցրեց էջը:

—Ի՞նչպէս կարող եմ ես ուրախ լինել, սիրելի էշ,—լալազին պատասխանեց կատուն.—տեսնում ես, ես ծերացել եմ, բոլոր առամներս թափուել են և էլ չեմ կարող մուկը որսալ. դրա համար իմ տիրուհին ուզում էր վզիցս մի քար կապել, ջուրը վցել, որ խեղդուեմ: Ասենք այդ փորձանքից պրծայ, փախայ, բայց չզխտեմ, ուր գնամ, ինչ անեմ:

—Երկուս չլինինք, երեք լինինք,—ասաց էշը.—արի, գնանք այս մօտիկ քաղաքը երգիչ դառնալու:

Կատուն համաձայնուեցաւ և երեքը միասին շարունակեցին ճանապարհը:

3.

Գնացին, գնացին, պատահեցին մի արաղաղի, որը դուան առաջ կանգնած, որքան ոյժ ունէր, կանչում էր:

—Ինչո՞ւ ես այդպէս ազգակու՞մ, արաղաղ եղբայր,—հարցրեց էշը.—ինչ է պատահել քեզ:

—Էլ ի՞նչ պիտի լինի,—պատասխանեց արաղաղը.—վաղը իմ տիրոջ տօնն է, շատ հիւրեր են կանչուած: Այդ պատճառով տանտիկինը հրամայեց, որ ինձ մորթեն, վազուան համար կերակուր պատրաստեն:

—Մի վշտանար,—ասաց էշը.—երեք չլինինք, չորս լինինք. դու լաւ ձայն ունիս. արի մեզ հետ, գնանք, դու էլ երգիչ դարձիր:

Արաղաղն էլ համաձայնուեցաւ և նրանք բոլորը միասին ճանապարհ ընկան:

4.

Չատ գնացին թէ քիչ, իրիկնապահին հասան մի անտառ և վրձուեցին գիշերն այնտեղ անցկացնել: Էշն ու շունը պառկեցին մի մեծ ծառի տակ, կատուն բարձրացաւ, նստեց ճիւղի վրայ, իսկ արաղաղը ծառի գագաթին թառեց: Այստեղից նա չորս կողմը նայեց, տեսաւ, որ հեռուից մի լոյս է երևում:

—Այստեղից ո՞չ հեռու կարծեմ մի տուն կայ,—կանչեց նա ընկերներին:

—Վեր կացէք, գնանք այնտեղ, էլի մի բան կրգտնենք ուտելու. թէ չէ այստեղ շատ վատ է,—ասաց էշը:

5.

Բոլորը վեր կացան և ճանապարհ ընկան դէպի այն կողմը, որտեղից լոյս էր երևում: Չուտով նրանք հասան մի տան, որտեղ քառասուն աւազակ էին բնակուած: Էշն ամենից մեծն էր. նա գնաց, պատուհանից նայեց, որ տեսնի, թէ ներսն ինչ կայ: Երբ վերադարձաւ, արաղաղն հարցրեց.

—Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ այնտեղ:

—Էլ ի՞նչ պիտի լինի,—պատասխանեց էշը.—տան մէջտեղը մի մեծ սեղան է բաց արած, վրան լաւ-լաւ կերակուրներ ու խմիչքներ շարած, չորս կողմը քառասուն աւազակ նստած՝ ուտում-խմում են: Կերակուրների անունը որ լսեցին, բոլորի բերանի ջուրը գնաց:

Արաղաղն ասաց.

—Ի՞նչ լաւ կըլինէր, որ այդ բոլորը մեր առաջ շարուած լինէր:

—Այո,—հառաչեց էշը.—գոնէ մի քիչ փորերս կըկշտացնէինք:

Նրանք սկսեցին խորհուրդ անել, թէ ինչպէս անեն, որ աւազակներին այդտեղից փախցնեն: Մտածեցին, մտածեցին և վերջապէս վճռեցին, որ էշը բարձրանայ, կանգնի պատուհանի առաջ, շունը նստի նրա մէջքին, կատուն բարձրանայ շան վրայ, իսկ արաղաղը թռչի, նստի կատուի գլխին:

6.

Ինչպէս որ վճռեցին, այնպէս էլ արին: Յետոյ բոլորը միասին սկսեցին ազգակել: Էշը դուռ էր, շունը հաչում, կատուն մլաւում, իսկ արաղաղը կանչում: Յանկարծ պատուհանը փշրուեց և բոլորը միասին ներս գլորուեցին: Աւազակները կարծեցին, թէ եկել են իրանց բռնելու, սարսափած թողին տուն ու տեղ, փախան դէպի անտառ: Չորս ընկերների ուզածն էլ հէնց այդ էր. նրանք իսկոյն նստեցին և այնքան կերան, որ կարծես մի ամիս ոչինչ չէին կերել:

Երբ լաւ կերան-կշտացան, ճրագը հանգրլին և պարկեցին քնելու: Էշը պարկեց բազում, աղբի վրայ, շունը դուան յետևը, կատուն վառարանի մօտ, իսկ արաղաղը բարձրացաւ, նստեց դուան վրայ, և երկար ճանապարհ գնալուց յոգնած լինելով, չուտով բոլորն էլ քնեցին:

7.

Կէս գիշերին, երբ հեռուից աւազակապետը տեսաւ, որ տանն էլ կրակ չկայ և ո՞չ մի ձայն չի լսում, ասաց աւազակներին մէկին.

— Գնահ, տե՛ս, թէ ինչ կայ մեր տանը:

Աւագակը գնաց, տեսաւ, որ ձայն-ծպտուն չկայ, ներս մտաւ և ուզում էր ճրագ վառել: Մութ սենեակում կատուի աչքերը պսպղում էին. նա կարծեց, թէ լուցկի է, մօտեցաւ, որ վեր առնի. բայց կատուն յանկարծ թռաւ նրա երեսին և մի լաւ ճանկռոտեց: Աւագակը սաստիկ վախեցաւ և ուղեց փախչել. բայց շունը, որ դռան մօտ պարկած էր, վրայ հասաւ և ոտը կծեց: Երբ նա ուզում էր բապի միջով փախչել, էջը իւր յետին ոտներով մի սարսափելի աքացի տուեց նրան. իսկ աքաղաղը, որ այդ աղմուկից արթնացել էր, դռան վրայից կանչեց՝ «ծուզրուդո՛ւ»:

8.

Վերջապէս աւագակը մի կերպ դուրս պրծաւ և վազելով գնաց աւագակապետի մօտ և ասաց.

— Օհ, մեր տանը մի սատանայ կայ նստած. նա երեսս ճանկռոտեց. դռան առաջ կանգնած էր մի մարդ, ձեռքին մի դանակ բռնած. նա ոտս ծակեց: Բազումը պարկած է մի մեծ դև. նա երկու հաստ դաւազանով այնպէս խփեց ինձ, որ քիչ մնաց՝ տեղս մնայի: Իսկ կտուրը նստած է մի դատաւոր, որ կանչում էր. «բռնեցէք, ինձ մօտ բերէք այդ աւագակին»: Հազիւ փախայ և ազատուեցի:

Աւագակներն էլ սիրտ չարին վերադառնալ: Նրանք թողին իրանց տունը և հեռացան, ուրիշ աշխարհ գնացին: Իսկ մեր երգիչներին այնքան դուր եկաւ այս տունը, որ վճռեցին միշտ այդտեղ ապրել:

70. ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԶԱԳՈՒԿԸ

(Մանկական խաղ)

Մանուկներ:

Սիրուն ձագուկ, չունիս մայրիկ և կամ հայրիկ,
Որ թռչում ես ոլոր-մոլոր մեր շորս բոլոր:

Ձագուկ:

Ուրուրն այսօր տարաւ իմ մօր:

Մանուկներ:

Ձագիկ, մի լար, որբիկ, մի լար,
Դու չես մնալ անտէր, անմայր:

Եկէք, քոյրեր ու եղբայրներ,
Ընկնենք սարեր ու անտառներ,
Գնանք-գտնենք, խնդրենք մէկին,
Որ մայր դառնայ այս խեղճ ձագին:

Սիրուն հաւքեր, երկնից հաւքեր,
Առէք ձեր հետ ձագին անտէր:

Կ և ու:

ԿճԷԿ — կճԷԿ, կճԷԿ — կճԷԿ...

Մանուկներ:

Չէ, չէ, կիւն, այլոց բնում
Չու ես դնում, մայր չես դառնում:

Ազոսաւ:

Գո՛ւ, գո՛ւ, գո՛ւ...

Մանուկներ:

Չէ, չէ, ազոսաւ, գող, գիշակեր,
Քեզ չենք յանձնիլ, մի կոայեր:

Կ ո ու ն կ:


Կ՛ըռ, կ՛ըռ, կ՛ըռ...

Մանուկներ:

Չէ, չէ, կոսնիկ վարնանասէր,
Մեր երկիրներ կայ ցուրտ ձմեռ:

Տատրակ:

ՎճԷ, վճԷ, վճԷ...



Մանուկներ:

Չէ, չէ, տատրակ, գիտենք լաւ ես,
Ազնիւ հաւ ես, բայց լալկան ես:

Չազի մայրը:



Մարդն ուրուրին սպանեց,
Ինձ ճանկերից ազատեց,
Տուէք ձագս, խնդրում եմ,
Ո՛վ է գտել, փնտրում եմ:

Մանուկներ:

Առ, առ, մայրիկ,
Քո խեղճ ձագիկ,
Սիրուն ծըտիկ,
Որ չթռչի
Ոլոր—մոլոր
Մեր շորս բոլոր:

Չագնակ, ձագնակ, ուրախ կաց,
Մօրդ գնա գրկաբաց,
Հետը թռիք, հեռացիր,
Անցած ցաւդ մոռացիր:

Չագը մօրը սիրում է,
Առանց նրան տխրում է,
Երբ որ նրան գտնում է,
Ուրախ ճշում, ճխտում է:



« Ազգային գրադարան



NL0249313

7931